Հայության չհակակշռված, բարձիթողի արված ու ինքնահոսի մատնված կյանքը



Մենք՝ հայրենաբնակ եւ հայրենիքից դուրս՝ Սփյուռքում գտնվող հայերս շատ մեծ կարողականությամբ օժտված ժողովուրդ ենք, տնտեսական-նյութական միջոցների պակաս չունենք եւ, կարելի է ասել, որ Հայաստան-Սփյուռք ամբողջությամբ վերցրած, նյութապես շատ հարուստ ժողովուրդ ենք, Հայաստանում ու Հայաստանից դուրս ունենք շատ մեծ թվով գիտնականներ, մասնագետ արհեստավորներ, իրավաբաններ եւ ամենատարբեր մասնագիտություններով զբաղվող մարդիկ:

Կենսափորձի եւ ծանոթությունների արդյունք մեր այս հաստատումները՝ անհրաժեշտ է, որ ստուգվեն եւ հաստատվեն կամ չհաստատվեն վիճակագրորեն, եւ այս առումով, կարծում ենք, որ շատ մեծ դեր է վերապահված Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությանը, որը Սփյուռքի տարբեր կազմակերպությունների մասնակցությամբ եւ վիճակագրական մասնագետների միջոցով կարող է հստակեցնել խնդիրը:

Մենք հիշյալ խնդրի լուծման իմաստով ձեռնհասություն չունենք, սակայն ներկայացնենք մի քանի առաջարկներ, որոնք կարող են թերեւս ապագայում նկատի առնվել խնդրի լուծման համար ծրագիր մշակող մարդկանց ու մարմինների կողմից:

Հայ գործարարների դերը մեր երկրի տնտեսության զարգացման գործում

Կարելի է համախմբել տարբեր երկրների հայ բազմամիլիոնատեր գործարարներին, որոնք, ի դեպ, շատ մեծ թիվ են կազմում Սփյուռքում, եւ բանիմաց մասնագետների միջոցով նրանց բացատրել Հայաստանում տնտեսական ներդրումներ կատարելու դժվարություններն ու դյուրությունները, եւ՝ թե տնտեսության որ բնագավառներում կարելի ու նպատակահարմար է տնտեսական ներդրումներ կատարել: Դրանից հետո տարբեր երկրների հայ գործարարները տվյալ երկրներում կարող են ստեղծել նյութապես կարող ու մեծ ընկերություններ, եւ արձանագրվել որպես այդ երկրների ընկերություններ եւ, իբրեւ այդպիսիք, գալ Հայաստան եւ փոխշահավետ գործունեության լծվել:

Այս ընկերությունները, հաջողություն արձանագրելու պարագայում, բաժնետիրական դրություն ստեղծելով կարող են հայրենիքի եւ Սփյուռքի պարզ աշխատավորությանը եւս մասնակից դարձել իրենց գործունեությանը, որով ներդրումները համազգային բնույթ կստանան:

Տնտեսական ներդրումներին իբրեւ արդյունք կզարգանա Հայաստանի տնտեսությունը, կբարձրանա հայրենաբնակ մեր ժողովրդի կենսամակարդակը եւ գնողական կարողությունը, որից կօգտվեն նաեւ հայրենաբնակ գործարարները:

Հիշյալ ընկերության անդամները՝ հայ լինելով, մեծ հավանականությամբ իրենց շահած գումարները չեն հեռացնի մեր երկրից, ինչպես օտար ընկերությունները, այլ ավելի եւս կծավալեն իրենց գործունեությունը մեր երկրում:

Ի դեպ, ասենք, որ աշխարհի բոլոր երկրներում ու նաեւ մեր երկրում մեծ ընկերություններն իրենք իրենց իրավունքները պաշտպանելու շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան առանձին գործարարները, որոնք հաճախ դիվանակալական քաշքշուկների են հանդիպում:

Հայրենաբնակ ու սփյուռքահայ գիտնականների դերը գիտության զարգացման գործում

Մենք Սփյուռքում, հատկապես արեւմտյան երկրներում, ունենք շատ մեծ թվով գիտնականներ ու համալսարանի դասախոսներ գիտության բոլոր բնագավառներում, որոնց կարելի է համախմբել եւ նրանց գոնե մի մասին մասնակից դարձնել գիտության զարգացման գործին Հայաստանում: Այս մասնակցությունից վստահաբար շատ գոհ կմնան հիշյալ գիտնականները, քանզի նրանց համար շատ մեծ նշանակություն ունի իրենց գործունեության արդյունքը, եւ այդ արդյունքի ձեռքբերումը շատ ավելի դյուրին է Հայաստանում, քան նրանց ապրած երկրներում:

Աշխարհասփյուռ հայ իրավաբանները կարող են զարգացնել Հայաստանի օրենսդրական դաշտը

Ինչպես Սփյուռքի գիտնականներին, այնպես էլ Սփյուռքի հայ իրավաբաններին, որոնք շատ մեծ թիվ են կազմում եւ մասնագիտացած են իրավաբանական բոլոր բնագավառներում, կարելի է համախմբել եւ մասնակից դարձնել Հայաստանի օրենսդրական դաշտի զարգացմանը:

Հանգստյան կամ թոշակի կոչված աշխարհասփյուռ հայ մասնագետ արհեստավորները կարող են արդիականացնել մեր երկրի արհեստագիտությունը

Սփյուռքում ունենք նաեւ մեծ թվով հանգստյան կամ թոշակի կոչված արհեստավորներ: Մեր գործարարների միջոցով մեր երկրում կարելի է ստեղծել արհեստագիտական դպրոցներ-քոլեջներ եւ Սփյուռքից հրավիրել հիշյալ մասնագետ արհեստավորներին, որպեսզի նրանք դասավանդեն այդ արհեստագիտական դպրոցներում, որպեսզի մենք կարողանանք հրաժարվել խորհրդային ժամանակավրեպ արհեստագիտությունից եւ կարողանանք ժամանակակից զարգացած ու արդիական արհեստագիտություն որդեգրել, որի խիստ կարիքն ունի մեր երկիրը:

Կարծում ենք, որ հիշյալ՝ հանգստյան կոչված մասնագետ արհեստավորներից շատերը կստանձնեն Հայաստանում երիտասարդ արհեստավորների սերունդ պատրաստելու առաքելությունը եւ այդ առաքելությունը կկատարեն անվճար ու կամավոր կերպով:

Հանգստյան կոչված մեր մասնագետները հավանաբար կհոգան նաեւ իրենց երթեւեկության ու կեցության ծախսերի մի մասը եւ շատ գոհ կմնան իրենց կամավոր ծառայություններից, քանզի հասուն տարիքում կզգան իրենց առաքելության կարեւորությունը, իրենց շոյված կզգան, կիմաստավորվի իրենց կյանքը եւ հոգեպես կբավարարվեն:

Նպատակահարմար գործելակերպ որդեգրելով՝ կարելի է նաեւ արհեստագիտական դպրոցների շրջանավարտ երիտասարդների համար համապատասխան աշխատանք գտնել:

Արտագաղթին մասամբ կարելի է հակադարձել՝ ներգաղթ կազմակերպելով

Դժբախտաբար, մեր երկրից արտագաղթը տակավին շարունակվում է, սակայն դա չի նշանակում, որ ներգաղթ չի կարելի կազմակերպել: Ասենք նաեւ, որ կան որոշ թվով հայրենադարձներ, որոնք մեր երկրի դժվարությունները հայրենաբնակների հետ կիսելով հանդերձ, գոհ են հայրենիքում հաստատված լինելուց եւ իրենց կյանքից:

Մեր ժողովուրդը, ինչպես ամեն մի ժողովուրդ, բաղկացած է տարբեր շերտերից ու խավերից: Հասարակագիտորեն կարելի է ուսումնասիրել, թե մեր ժողովրդի որ խավերն են, որոնք ցանկություն ու հնարավորություն ունեն Հայաստան գալու եւ իրենց համար հանգիստ կյանք ապահովելու:

Համոզված ենք, որ պետական մշակված ռազմավարությամբ եւ Սփյուռքի եկեղեցական, քաղաքական կազմակերպությունների եւ տարբեր միությունների մասնակցությամբ կարելի է հայրենադարձությանը թափ հաղորդել:

Հատուկենտ սփյուռքահայերի՝ Հայաստանի քաղաքացիություն ստանալու ցանկությունը կարելի է մասամբ ժողովրդականացնել՝ այն կազմակերպելով ու խթանելով

Սփյուռքում տարիներ առաջ պահանջվեց, որ Հայաստանի իշխանությունները սփյուռքահայերին Հայաստանի քաղաքացի լինելու իրավունք շնորհեն: Դրանից հետո նախ տասը տարվա կացության իրավունք շնորհվեց եւ ապա հայաստանյան քաղաքացիության իրավունք՝ հայկական անձնագիր տրվեց ցանկացողներին, եւ քիչ թվով սփյուռքահայեր հայկական անձնագիր ստացան: Այդքանը:

Նախ ասենք, որ պետք է դյուրացված հայկական անձնագիր ստանալու գործընթացն այնպես անել, որ որեւէ սփյուռքահայ, դիմելով իր ապրած երկրի հայկական դեսպանատուն կամ հյուպատոսարան եւ ներկայացնելով իր անձնական տվյալները, հեշտությամբ կարողանա հայկական անձնագիր ստանալ, իսկ եթե տվյալ երկրում հայկական դեսպանատուն կամ հյուպատոսարան չկա, ենթական կարողանա ամենամոտ երկրի հայկական դեսպանատուն կամ հյուպատոսարան դիմելով՝ հայկական անձնագիր ձեռք բերել:

Այս եւ՝ մեր արծարծած այլ հարցերը բարձիթողի են արվել, եւ հայ կյանքը ինքնահոսի է մատնվել:

Մենք վստահ ենք, որ մեր պետական այրերն ու կանայք, պետական կամք ցուցաբերելով, համապատասխան ռազմավարություն մշակելով եւ Սփյուռքի կազմակերպությունների ու հաստատությունների գործին մասնակից դարձնելով՝ կարող են լուծել վերոհիշյալ ու նաեւ չհիշված այլ հարցեր:

Մենք՝ հայերս, հաճախ ենք խոսում մեր դժվարությունների մասին, սակայն ընդհանրապես չենք փորձում ելք գտնել:

Այվազ Գրիգորյան
հինգշաբթի, 14 ապրիլ 2016թ.
Երեւան



Հաշվետվություն

ՍՊՄԿԵ՝ Տեսչական ստուգումներ ու գրանցումներ և բարեգործական հիմնադրամի 2015թ գործունեության մասին:
Հիմնադրամն գրանցվել է 03.05.2005թ (ՀՀ N 0014.16)
Գրանցման համարը՝ 443.160.10941
ՀՎՀՀ 90282182
Հիմնադրամն զբաղվում է բարեգործությամբ:
2015թ ընդհանուր գումարն է 30578 հազ. դրամ
Բնեռաուղղման ազդակը՝ գործարկ բարեգործների և հիմնադրամի կողմից գրանցագրված դրամաշնորհներ
2015թ նախորդ գումարն էր՝ 27 623 հազ. դրամ
Հիմնադրամի ֆինանսներից չեն օգտվել հոգաբարձուների խորհրդի անդամները

Հիշատակագրի գումարը

Ղեկավար՝ Գ. Ռուսանյան
Հաշվապահ՝ Յ. Գաբրիելյան
Գրասենյակ՝ Հ. Բաբայան
Հանրակրթ ծառայության հրատարակչի հասցեագրով՝ Գ. Մարգարյան

Հաշվապահական հաշվեկշիռ

	Առաջին գրաֆա		Ժամանակաշրջանի վերջին
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25		1030

Ղեկավար՝ Գ. Ռուսանյան
Հաշվապահ՝ Գ. Մարգարյան

Կատարված գործարքների հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին:

Ներգրավված միջոցներ	Ֆինանսական վարկ	Դրամական միջոցներ	Գործարքի միջոցներ
Ընդհանուր	27623	27623	27623
Այդ թվում աշխատավարձ	2380	2380	2380
Ենթակապահովագրություն	500	500	500
Մնացորդ	24743	24743	24743

Ղեկավար՝ Գ. Ռուսանյան

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ

Մենք բոլորս 20 տարի փափուկ բարձի վրա ենք քնել

/զրույց կամավորի հետ/

Ստեփանակերտում գտնվող «Նռենի» հուշանվերների խանութի տեղը բոլորը գիտեն: Այն, բացի հուշանվերների խանութ լինելուց, Ստեփանակերտի սրտում գտնվող մի անկյուն է, ուր իրար են խառնվել արվեստն ու արհեստը, ուր թարմ թեյի բաժակի շուրջ միշտ հաճելի զրույց կարող ես ունենալ խանութի տիրոջ՝ 1999 թվականից Արցախում հաստատված իրանահայ Արմոնդ Թահմազյանի հետ, ուր մեկ անգամ լինելուց հետո անընդհատ ուզում ես վերադառնալ, հատ առ հատ ուսումնասիրել խանութի բոլոր առարկաները, արվեստի հին ու նոր գործերը, եւ պարզապես հաճելի զրույց ունենալ աշխարհի անցուդարձի, մեր ներկայի եւ ապագայի մասին:

Այս անգամ մեր զրույցը սովորականից տարբերվում էր. այն ավելի մտահոգիչ էր, ավելի հուզումնալից, սակայն՝ լի ապագայի նկատմամբ հույս ու հավատով:

Արմոնդը մի քանի օր առաջ է վերադարձել դիրքերից, ուր մեկնել էր մտերիմ ընկերների հետ ապրիլի 2-ին՝ պատերազմական գործողությունների վերսկսման լուրը լսելուց անմիջապես հետո:

«1990-ականների Արցախյան պատերազմին բախտ չի վիճակվել մասնակցելու, սակայն հիմա Արցախում եմ, եւ, բնականաբար, պետք է անմիջապես գնայի. դա կասկածից վեր էր»,- ասում է նա:

Հիշում է, որ առաջին անգամ դիրքեր է բարձրացել երկու տարի առաջ, օգոստոսյան դեպքերի ժամանակ: Այն ժամանակ ընկերներով հավաքված քննարկում էին իրավիճակը, երբ որոշվեց, որ պետք է գնան եւ փորձեն որեւէ կերպ օգնել սահմանին կանգնած զինվորներին:

«Որքան էլ զարմանալի է, սակայն բացարձակ ճշմարտություն է, որ թեժ օրերին բոլորը մեկի պես սահման են ցանկանում մեկնել՝ կանգնելու սահմանը հսկող մեր տղերքի կողքին: Եվ մենք էլ ծանոթի միջոցով (ժպտում է) կարողացանք հասնել այնտեղ, որտեղ որ պետք է»,- պատմում է նա:

Երբ զինվորական պաշտոնյան հարցրեց, թե ո՞ւր են ցանկանում գնալ, պատասխանեցին՝ խնդրի բուն վայրը: Այդպես էր օգոստոսյան դեպքերի ժամանակ, այդպես էր նաեւ ապրիլյան քառօրյա պատերազմական գործողությունների ժամանակ:

«Ապրիլի 2-ի առավոտյան, երբ իմացանք, թե ինչ է եղել, անմիջապես նույն խմբով պատրաստվեցինք, վազեցինք մեր հին ծանոթի մոտ՝ խնդրելով մեզ դեպքի վայր՝ Թալիշ հասցնել: Ամեն ինչ այնպես դասավորեցինք, որ չխանգարենք զինվորներին: Ափսոսում եմ, որ ավելի շուտ չհասանք, սակայն մյուս կողմից էլ ապշել էի, թե ինչպես էին այդ տարիքի տղաներն իրենց դիմաց առաջադրանքներ դնում եւ փայլուն կատարում»,- ասում է:

Վստահ է, որ դիրքերում ամենակարեւորը կարգապահությունն է: Ամեն մի ավելորդ շարժում, գործողություն կարող է ճակատագրական լինել դիրքի բոլոր տղաների համար. «Ավելորդ խոսք, ավելորդ ձայն չկար. ամեն մարդ հստակ գիտեր իր անելիքները, ամեն ոք իր առջեւ դրած պարտականությունները հրաշալի էր կատարում»:

Ցավով է նշում, որ չակերտավոր պայմանավորվածությունից ընդամենը մեկ ժամ առաջ զոհվեց իրենց խմբի տղաներից մեկը՝ Նորայր Հաջիյանը: Նրանք միասին էին դիրքեր գնացել, իրար մոտ գտնվող դիքերում էին:

«Նորայրը 90-ականների պատերազմին մասնակցել եւ մարտական ուղի էր անցել: Պատերազմի լուրը լսելուց անմիջապես հետո հավաքել էր իր մարտական ընկերներին՝ Հայաստանի տարբեր հատվածներից, եւ բավական մեծ խումբ կազմելով՝ Ստեփանակերտի տղաների հետ միասին մեկնել ճակատ: Նա այն տղաներից էր, ով հստակ գիտեր իր անելիքները: Նորայրին ճանաչում էի արդեն 10 տարուց ավելի. լուսավոր էր, մաքուր սրտով, ժպիտը դեմքին, անվախ: Դրական լիցքեր էր հաղորդում, քաջալերում բոլոր զինվորներին: Նրա նմաններն են այսօր մեզ պետք թե՛ խրամատներում, թե՛ թիկունքում»:

Արմոնդը լռում է խորհրդավոր, ապա ցավոտ խոսքեր ասում. «Ապրիլյան օրերին ցայտուն դարձավ ժողովրդի եւ զինվորի միասնությունը, սակայն ավելի ցայտուն էր զինվորի, ժողովրդի եւ իշխանությունների միջեւ անդունդը: Համոզված եմ, որ հիմա պետք է վերացվի նախ եւ առաջ այդ անդունդը»:

Ասում է, որ եղած հնարավորություններով տղերքը կարողացան դիմադրել արժանվույն, եւ դա այլ բառով չի կարող կոչվել, քան՝ Հաղթանակ: «Ես դրա անունը Հաղթանակ եմ դնում, թեկուզ անդառնալի մարդկային կորուստներ ենք տվել, թեկուզ որոշ դիրքեր ենք զիջել, սակայն այլ անուն տալ չեմ կարող, քանի որ ընդգծվեց ժողովրդի եւ զինվորի մարտունակ վիճակը: Ազերիների նպատակը եթե իրականացվեր, նույնիսկ չեմ կարող երեւակայել, թե ինչ կլիներ: Բայց դրանով չի կարելի սփոփվել: Մենք բոլորս 20 տարի փափուկ բարձի վրա ենք քնել. երանի ավելի շուտ լիներ նման մի բան, որ ավելի շուտ հասկանայինք մեր բացերը»:

«Նրանք հատուկ պատրաստված ջոկատներով էին դուրս եկել մեր 18-20 տարեկան տղաների դեմ,- հավելում է Արմոնդը,- վստահ եմ՝ ինչ-որ բանի ազդեցության տակ էին, կրակում էինք, բայց շարունակում էին առաջ գալ: Այդ անձրեւին, ցեխին, մի շարք խնդիրներով հանդերձ՝ մեր տղերքը կարողացան հաղթահարել ամեն ինչ: Փառք Աստծո, զոհեր, վիրավորներ մեր դիրքում չունեցանք: Ամեն վայրկյան մտածում էի՝ հանկարծ չվիրավորվեմ, տղերքի գործին չխանգարեմ: Մենք կարողացանք հաղթել: Պատկերացրեք, եթե որոշ խնդիրները չունենայինք, ո՞ւր կհասնեինք»:

Արմոնդ Թամրազյանը նշում է, որ թերությունների մասին կարելի է շատ խոսել, սակայն նախ եւ առաջ պետք է «վերջ տալ պատասխանատու գործերը անպատասխանատու մարդկանց հանձնելուց»:

«Վերացնել երկրում կոռուպցիայի ցանկացած նվազագույն դեպք, ամրանալ բոլոր առումներով, եւ պատերազմին պատրաստ լինել՝ դպրոցներից մինչեւ մանկապարտեզ: Միշտ մարտական վիճակում լինել՝ դա ամենեւին չի նշանակում չապրել, չարարել, հակառակը՝ միայն այդ կերպ կարելի է խուսափել նոր կորուստներից»:

Հավատացած է, որ քառօրյա պատերազմի ընթացքում սառույցը հալվեց եւ շատ բան տեսանելի դարձավ. «Այլեւս տեսանելի է մեր թույլ եւ ուժեղ կողմերը: Լռել չի կարելի: Գործելն է կարեւորը: Ամեն մարդ, պաշտոնյայից մինչեւ հողագործ, պետք է հստակ իր անելիքներն իմանա, եւ իր հնարավորությունների չափով օգտակար լինի: Մենք այլեւս սխալվելու ոչ հնարավորություն, ոչ էլ ժամանակ ունենք: Ամեն մի սխալ կարող է ճակատագրական լինել: Անտարբերությունն այլեւս հանցանք է»:

Ասում է՝ դժվար է խրամատից տուն վերադառնալ. «Կուզեմ այնտեղ, ամենավտանգավոր դիրքում, ցեխի մեջ մնալ, սակայն այն մաքուր ու զուլալ հոգիներ ունեցող տղերքի մոտ: Ախր այնտեղ ուրի՞շ աշխարհ է: Կուզեի, որ բոլորը մտածեն, որ այնտեղ՝ դիրքերում, իրենց կյանքը մեզ համար զոհող տղաներն իրենց հարազատ տղաներն են: Մտածեն ոչ միայն կենաց ասելու ժամանակ, այլ՝ միշտ: Այդ դեպքում մենք խնդիրներ չենք ունենա, հավատացեք: Պետք է բոլորս մասնակից լինենք նրանց գործին՝ ապացուցելով, որ հենց այնտեղից է սկսում յուրաքանչյուրիս օջախը»:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Նոր պատերազմը հին վերքերս բացեց

Ապրիլի 1-ին լույս 2-ի գիշերը ժամը 3:00-ին սկսվեց Արցախյան պատերազմի նոր փուլը, որը պետք է, որ դադարեր ապրիլի 5-ի ցերեկվա ժ.12:00-ին հաստատված հրադադարի պայմանավորվածությամբ, սակայն դրան հաջորդող օրերին, մինչեւ ապրիլի 26-ը թշնամին շարունակում էր կրակի տակ պահել Մարտակերտի շրջանի մի շարք բնակավայրեր: Առավել տուժեցին Մարտակերտ քաղաքը, Թալիշ եւ Մատաղիս գյուղերը, որի արդյունքում հարյուրավոր բնակարաններ ավերվեցին: Արկակոծվեց նաեւ Մարտունի քաղաքը:

Ապրիլի սկզբին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը արդեն անցել էր իր բոլոր ընդունելի սահմանները՝ հասնելով ԼՂՀ բնակելի տարածքներ:

Մարտակերտում արկակոծությունները շարունակվեցին նաեւ ապրիլի 25-ի լույս 26-ի գիշերը, որի արդյունքում տասնյակ տներ ավերվեցին: Ապրիլի 2-26-ն ընկած ժամանակահատվածում Մարտակերտ քաղաքում 60-ից ավելի բնակարաններ տուժեցին արկակոծությունից. բարեբախտաբար, մարդկային զոհեր չեղան:

Մարտակերտ քաղաքի ամենասկզբում գտնվող Ամպերինա Խաչատրյանի տունը ամենատուժածներից է: Մեկ արկ ընկել է անմիջապես տան տանիքին, մյուսը՝ տան դիմաց:

«Այդ օրը գիշերեցի հարեւան գյուղում՝ բարեկամիս տանը: Առավոտյան, երբ վերադարձա, տունս ավերված էր: Կարեւորը՝ ոչ մեկը չի տուժել: Մտքովս անգամ չէր անցնում, որ նորից պատերազմ կլինի այստեղ: Դեռ տարիների վերքերս չեն ամոքվել, եւ նորից...»,- արցունքները զսպելով՝ պատմում է Ամպերինա Խաչատրյանը:

Ամպերինան արմատներով արցախցի է, սակայն 60-ականներին ամուսնացել եւ տեղափոխվել էր Բաքու, որտեղ եւ ծնվել են նրա 2 զավակներն ու դուստրը:

1990 թվականի Բաքվի ջարդերի ժամանակ ընտանիքը մի կերպ կարողացել է փրկվել եւ հայրենի Մարտակերտ վերադառնալ:

Ամուսնու հետ Մարտակերտում սկսեցին նոր տուն կառուցել: Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, ավագ որդին եւ ամուսինը առաջին կամավորականներից էին:

«Հայտնի էր, որ՝ կամ պետք է ամբոջությամբ կոտորվենք, կամ զենք վերցնենք՝ պաշտպանվենք, ինչն էլ արել են իմ եւ մյուսների ամուսիններն ու որդիները»,- ասում է նա:

Արցախյան պատերազմի ընթացքում ամուսինը մի քանի անգամ ծանր վիրավորվել է, ստանում, սակայն ապաքինվելուց հետո անմիջապես վերադարձել է ճակատ:

1994 թվականի հունվարի 11-ի մարտը ամուսնու՝ Շուրա Խաչատրյանի համար վերջինն է եղել: Իսկ 5 ամիս չանցած՝ զոհվում է 31-ամյա որդին՝ Կարենը:

«Տարիների ընթացքում ցավը սկսում է բթանալ. չի անցնում, սակայն սկսում ես հարմարվել դրան: Երբ կրտսեր որդիս զավակներ ունեցավ. նրանց որդուս եւ ամուսնուս անուններով կոչեցինք, դա էլ իմ սփոփանքը դարձավ: Սակայն այս նոր պատերազմը կարծես թե հին վերքերս բացեց: Ես մտածում էի՝ ամուսինս եւ որդիս իրենց կյանքը մատաղ են տվել իմ թոռների համար, որ նրանք խաղաղ ապրեն: Պարզվում է՝ սա ոչ թե մեկ, երկու, այլեւ 3 սերունդների պատերազմ է, եւ դեռ շարունակում է անմեղ կյանքեր խլել»:

Ամպերինան ապրում էր, որպես զոհված ազատամարտիկի մայր եւ կին պետության կողմից իրեն հատկացված փոքրիկ տանը՝ թոռան հետ: Պետական մարմինները խոստացան, որ կարճ ժամանակահատվածում կվերանորոգեն նրա տունը, եւ նա կարող է թոռան հետ վերադառնալ այնտեղ:

«Անկեղծ եմ ասում՝ տունը աչքիս չի երեւում: Ինչ լինում է, թող այդ պատերին լինի, կարեւորը՝ ոչ մի մարդկային կորուստ չլինի, եւ սահմանին էլ երկար սպասված խաղաղություն լինի, որ վերջապես մենք մեր արժանի երջանկության եւ ապրելու իրավունքի բաժինը ստանանք»,-ասում է նա:

Ա.Ն.

ՀՕՄ-ը՝ Արցախի ու արցախցու կողքին

Հայ օգնության միության աշխարհասփյուռ կառույցն այս օրերին, ինչպես միշտ, արցախահայության կողքին է՝ իր օժանդակությունը բերելու հայոց բանակին ու պատերազմի հետեւանքով իրենց բնակավայրերը լքած փախստական ընտանիքներին: ՀՕՄ-ի Կենտրոնական վարչությունը առաջիններից էր, որ արձագանքեց Արցախին օգնելու համահայկական գործին՝ դրամական օժանդակություն ուղարկելով Արցախ: Միաժամանակ՝ Կենտրոնական վարչությունը 50.000 ԱՄՆ դոլար է փոխանցել ԼՂՀ կառավարության հատուկ հաշվեհամարին:

«Ապառաժ»-ի հետ զրույցում ՀՕՄ-ի Արցախի միավորի գրասենյակի պատասխանատու Սվետլանա Հարությունյանը նշեց, որ ապրիլյան պատերազմական գործողություններին հաջորդած օրերին ՀՕՄ-ը մի շարք ծրագրեր է իրականացրել եւ շարունակում է իրականացնել: Առաջին օրերին Արցախի ՀՕՄ-ուհիներն իրենց նախաձեռնությամբ ու սեփական միջոցներով սննդամթերք, հագուստ եւ այլ պարագաներ են հավաքել՝ Թալիշի, Մատաղիսի, Մարտակերտ քաղաքի բնակիչներին տրամադրելու նպատակով, ովքեր ժամանակավոր ապաստան են գտել Ստեփանակերտում: Ծրագրին շտապ արձագանքել է ՀՀ ՀՕՄ-ի միավորը՝ ուղարկելով զինվորների համար ծածկոցներ, զուգագուլպաներ, հիգիենայի եւ այլ պարագաներ, իսկ փախստականների համար սննդամթերք եւ հագուստ:

ՀՕՄ-ի Արցախի անդամներն այցելել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ եւ հանրապետական հիվանդանոց: Մանկական հիվանդանոցում բուժում ստացող երկու վիրավոր երեխաներին ՀՕՄ-ն իր օժանդակությունն է ցուցաբերել:

ՀՕՄ-ի Ստեփանակերտի գրասենյակը մշտական կապ է պահում ԼՂՀ կառավարության կողմից կյանքի կոչված հատուկ հանձնաժողովի եւ ԼՂՀ սոցապ նախարարության, Կրթության, գիտության եւ սպորտի, ինչպես նաեւ Առողջապահության նախարարությունների հետ՝ տարհանված բնակիչներին ձեռք մեկնելու գործում համագործակցելու նպատակով:

Վարչությունը նաեւ պայմանավորվածություն է ձեռք բերել ԼՂՀ կառավարության հետ եւ տրամադրել անհրաժեշտ փոխադրամիջոց, որպեսզի փախստականները կարողանան մի քանի ժամով մեկնել իրենց գյուղերը եւ տներից վերցնել առաջին անհրաժեշտության իրերը: ՀՕՄ-ուհիներն ուղեկցել են նրանց:

«Ստեփանակերտի կրթության բաժնի վարիչի հետ պայմանավորվեցինք, որ տեղեկություններ տրամադրեն մեր վարչությանը՝ 2016թ. ապրիլին ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարհանված գյուղերից Ստեփանակերտում դպրոց հաճախող երեխաների մասին: Վարչությունն անմիջապես որոշում կայացրեց օգնելու ծնողներին՝ հագուստի եւ դպրոցական պիտույքների ձեռք բերման հարցով,- նշեց Սվետլանա Հարությունյանը եւ ավելացրեց, որ այդ նպատակով Կենտրոնական վարչության կողմից ուղարկված օժանդակությունից միանվագ դրամական օգնություն են ցուցաբերում Մարտակերտի շրջանի տուժած բնակավայրերի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին: Մայիսի 16-ի դրությամբ՝ 6.110000 դրամի չափով աջակցություն է ցուցաբերվել մոտ 600 երեխաների»:

ՀՕՄ-ի Արցախի միավորի վարչության նախաձեռնությամբ համաձայնություն է ձեռք բերվել Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի հետ՝ Մարտակերտի շրջանի գյուղերից ժամանակավոր տարհանված ընտանիքների նախադպրոցական երեխաներին անվճար ընդգրկել Ստեփանակերտի պետական եւ ոչ պետական մանկապարտեզներում:

ՀՕՄ-ի կողմից իրականացվող «Զոհված ազատամարտիկների, զինծառայողների եւ երկկողմանի ծնողազուրկ ընտանիքների անչափահաս երեխաների խնամակալության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել են նաեւ ղարաբաղ-ադրբեջանական շփման գծում զոհված զինծառայողների ընտանիքները:

ՀՕՄ-ուհիները, հավատարիմ մնալով կազմակերպության որդեգրած ուղեգծին, թե՛ գործով, թե՛ խոսքով շարունակում են քաջալերել, նեցուկ կանգնել հայ զինվորին, հայ կնոջն ու մանուկին: Հայաստանի եւ Սփյուռքի ՀՕՄ-ի մեր կառույցները մեկ բռունցք դարձած, արցախահայության կողքին են, Արցախի միավորի միջոցով շարունակում են թե՛ դրամական, թե՛ պարենային, թե՛ տարբեր այլ օգնություններ ուղարկել՝ իրենց միասնությունն ու պատրաստակամությունը ցուցաբերելով համահայկական այս կարեւոր, դժվար ու պատասխանատու գործին:

«*ԱՊԱՌԱԺ*»

Արցախի խնդիրն ամեն մի հայի խնդիրն է

Այս օրերին Արցախը համայն հայության ուշադրության կենտրոնում է, ասել է թե՝ համայն հայությունը բռունցքվել է Արցախում ու Արցախի համար: Յուրաքանչյուրն իր հնարավորության սահմաններում ներդրում է ցուցաբերում արցախահայության խնդիրներին:

Մայիսի 6-9-ը անձնական նախաձեռնությամբ Արցախում էին նաեւ Թեհրանի հայ համայնքի ներկայացուցիչները, որոնցից Սեւան Դանիելյանի հետ առիթ ունեցանք զրուցելու: Սեւանը նշեց, որ հանդիսանում է հայկական համայնքի 17 դպրոցների պատասխանատու մարմնի անդամ եւ իր ընկերների՝ Սարո Մկրտչյանի, Արա Ավետյանի եւ Նարեկ Շահրամանյանի հետ ժամանել են Արցախ՝ տեղում ծանոթանալու ներկա իրավիճակին եւ, ինչպես ինքն է ասում, «իրենց Արցախի մասնիկը զգալու»:

«Ապրիլյան այս օրերին Թեհրանի հայ համայնքը ոտքի կանգնեց: Նույնիսկ նրանք, ովքեր մինչեւ այդ չէին հետաքրքրվում ազգային հարցերով, ակտիվացան: Աշակերտների ծնողներն ամեն օր զանգում էին, հետաքրքրվում, թե ինչով կարող են օգտակար լինել,- ասում է Սեւանը,- զգում էի, որ հասկանում են, որ սա համայն հայության հարցն է, ու ամեն մարդ իր չափով պետք է դերակատար լինի տարվող աշխատանքներին»:

Սեւանը նշում է, որ 1000-ից ավելի նամակներ է բերել աշակերտների կողմից: Նամակներ՝ հայ դիրքապահներին: «7-8 տարեկան աշակերտներն անգամ նամակներ են գրել, որոնք մեր ձեռքով հանձնեցինք զինվորներին: Ի՞նչ է սա նշանակում. 7-8 տարեկան երեխան էլ իր պարտքն է զգում որգեւորելու զինվորին, նա էլ իրեն հայրենիքի մասնիկ է զգում: Սա, իհարկե, գալիս է նրանից, որ ճիշտ ու հայեցի դաստիարակություն է ստանում դպրոցում ու տանը»,- ասում է Սեւանը:

Սեւան Դանիելյանն իր ընկերների հետ այցելել է դիրքեր ու Արցախի մի շարք գյուղեր: Ասում է՝ գյուղացիներին հանդիպելուց հետո որոշել են ծրագիր մշակել՝ օգնել գյուղացիներին՝ սպառելու իրենց արտադրանքը: «Մեր օղակներով կփորձենք օգտակար լինել՝ որոշ մթերքներ տանել Իրան եւ վաճառե: Չէ՞ որ տղամարդիկ դիրքերում են, եւ նրանց ընտանիքներին պետք է օժանդակել,- նշում է նա եւ հավելում,- գյուղացիների մոտ ես հաստատակամություն տեսա, այստեղ մնալու եւ ապրելու կամք՝ ի հեճուկս թշնամու ոտնձգությունների: Ես հասկացա, որ այս հասարակ մարդկանց մեջ է ամփոփված հողի ուժը, երկրի ուժը, նրանք են իրական հայրենասերները, ուղղակի նրանք ամեն պահի պետք է զգան, որ մենակ չեն: Պետք է երկիրը տնտեսապես ամուր լինի, որպեսզի այս մարդիկ չխեղճանան, միշտ այս ոգին ունենան: Դրա համար Արցախի խնդիրը ե՛ւ արցախցի իշխանավորի, ե՛ւ հասարակ քաղաքացու, ե՛ւ դպրոցականի, ե՛ւ Սփյուռքում ապրող ամեն մի հայի խնդիրն է: Ապրիլյան պատերազմը մեզ լավ դասեր տվեց, այդ դասերը հաշվի առնելով՝ պիտի առաջ շարժվենք: Միասնությունը հաղթեց, զինադադար պարտադրեց. այդ միասնությունը պետք է այսուհետ եւս պահպանվի, ամեն մարդ իր տեղում պետք է լինի ու չխուսափի պատասխանատվությունից. սա է, ըստ իս, այսօրվա անելիքը»:

Թեհրանի դպրոցների աշակերտներն անուն առ անուն ճանաչում են նորօրյա հերոսներին: Սեւանն ասում է. «Այդ երեխան, ինչո՞ւ չէ, կարող է վաղը գալ եւ պատրաստակամություն հայտնել Արցախի բանակում ծառայելու, զգալու, որ ինքն էլ է այս երկրի զինվորը»:

Սեւանն իր ընկերների հետ առաջին անգամ չէ Արցախում, բայց ինչպես ինքն է ասում՝ առաջին անգամ է Մայիսի 9-ն Արցախում նշում:

«Այցելեցինք որոշ դիրքեր, տեսանք 18 տարեկան զինվորների ու անգամ հասակ առած կամավորականների: Հայր ու որդի տեսանք ամեն դիրքում՝ իրար թեւթիկունք: Հասկացա՝ նրանք են մերօրյա հերոսները: Ամեն ժամանակ իր հերոսներն է ծնում, ու այս հերոսները ոչ մի բանով չեն զիջում նախորդներին...»:

Սեւանը նշեց նաեւ, որ Թեհրանի «Թեւանիկ» խումբը, որը սերտ կապեր ունի Հայ օգնության միության հետ, իրենց միջոցով օգնություն է ուղարկել՝ ՀՕՄ-ի միջնորդությամբ ռմբակոծության ենթարկված ու տարհանված բնակավայրերի փախստականներին օժանդակելու համար:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

Շուշիի ազատագրումը տարիների հեռվից

Շուշիի ազատագրումը միշտ նշվում է ավելի մեծ հանդիսավորությամբ ու շուքով, քան ԼՂՀ անկախության հռչակումը: Իրականությունն այն է, որ Արցախի անկախացումը շատ ավելի պայմանավորված է Շուշիի ազատագրմամբ, քան անգամ համապատասխան հանրաքվեով եւ անկախության հռչակմամբ: Կարելի է հիշել, թե պատմական այն օրերին ինչ նշանակություն ուներ Շուշիի ազատագրման երազանքը: Զինվորական, քաղաքական գործիչ, թե Արցախի պարզ բնակիչ, ինչպես եւ հայությունն առհասարակ, հասկանում էին, որ քանի դեռ Շուշին ազերիների ձեռքին կլինի, Արցախի անվտանգության եւ ազատագրության մասին ավելորդ է մտածելը: Կասկած չկա, որ նույն զգացողությունն ունեին նաեւ ադրբեջանցիները:

Եւ պատահական չէ, որ հաջորդած տարիներին հայկական կողմից «հնարավոր» զիջումների շարքում հակառակորդ կողմը պատկերացնում էր նաեւ Շուշին: Սա վկայում է Շուշիի ռազմավարական նշանակության մասին, եւ իմիջիայլոց, պատահական չէ, որ հենց Շուշիի ազատագրմանը հաջորդեց Արցախի ու Հայաստանի միջեւ եղած միջանցքը բացելու անհրաժեշտության գիտակցումն ու հնարավորությունը: Շուշիի ազատագրումը նաեւ հնարավորություն ընձեռեց անվտանգ ձեւով իրար կապելու Արցախի հարավն ու հյուսիսը, ինչպես եւ նպաստավոր հիմք ստեղծեց ավելի հարավ ընկած, նախկին ԼՂ սահմաններին կից տարածքների ազատագրման համար: Այսինքն՝ Շուշիով ապահովվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգ եւ կենսունակ ամբողջության կայացումը:

Գաղտնիք չէ, որ շատ ավելի փոքր բնակավայրերից ազերիներին դուրս քշելու համար առավել կատաղի բախումներ եղան, քան համեմատության մեջ նույնը տեղի ունեցավ Շուշիի պարագայում: Արցախի հինավուրց մայրաքաղաքի հայացումը տեղի ունեցավ շատ ավելի վաղ, քան այնտեղ ոտք կդներ հայ զինվորը: Շուշին նախ եւ առաջ ազատագրվեց հայության գիտակցության մեջ այդ գաղափարի հաղթանակով՝ ադրբեջանցիների գիտակցության մեջ սերմ նետած Շուշին պահելու անհնարինության գիտակցության նկատմամբ: Մինչ Շուշիի ազատագրումը դրան սպասում եւ այդ մասին խոսում էր ողջ Ղարաբաղը՝ երեխաներից մինչեւ ծերեր, ինչպես եւ՝ դժգոհ անհամբերությամբ ամենօրյա խոսակցության առարկա էր այն հարցը, թե ինչու է կարեւոր գործն ուշացվում: Համեմատության համար հիշենք նաեւ, որ անմիջապես Շուշիի ժայռակուռ բերդապարիսպների տակ ծվարած փոքրիկ Քարինտակ գյուղը ազերիներն այդպես էլ չկարողացան դատարկել, որովհետեւ քարինտակցին եւս վստահ էր, որ իր գլխին կախված փորձությունը շուտով ավարտվելու է:

Ուրեմն՝ ԼՂՀ հետագա ճակատագիրը որոշելու է, առաջին հերթին, հայության ներկբա կամքն ու վճռականությունը: Եւ դիվանագիտական, քաղաքական ու նույնիսկ ռազմական գալիք դիմակայությունների պարագայում չպետք է մոռանալ, որ ուժերի հարաբերակցության առումով երբեք իրավիճակը մեզ համար ավելի աննպաստ չի եղել, քան այն ժամանակահատվածում, երբ հաջողվեց ազատագրել Արցախը: Հետեւաբար, նաեւ առկա դժվարությունների արձանագրումը չպետք է վերածվի հավանական զիջումների հիմնավորման:

Եթե Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը պատմական հիշողության արժեք ունեցող երբեմնի Հայաստանի վերածունդն էր, ապա Շուշիի ազատագրումը շրջադարձ էր Ցեղասպանության, Առաջին Հանրապետության անկման եւ հայկական տարածքների վերաբաժանման հետեւանքով ձեւավորված իրողությունից, եւ հայության համար բացում էր հայոց նոր պատմության գրվելիք էջը: Շուշիի եւ Ղարաբաղի հայացումը Հայաստանը ուժեղացնում են ոչ թե առկա տարածքի համեմատության չափով, այլ մի քանի անգամ մեծացնում են այսօրվա ու վաղվա Հայաստանի հզորացման ներուժը:

Ցավոք, մեր ներքին կյանքի այսօրվա դժվարությունները կարծես թե ստվերում են իրական հնարավորությունները՝ թույլ չտալով լիարժեքորեն զգալ ձեռք բերածի չափը, կշիռը եւ հնարավորությունը:

Իհարկե, երազանքներն իրականության չեն վերածվում միայն խանդավառության շնորհիվ: Օրինակ, ազատագրված տարածքը նշանակությունից զուրկ աշխարհագրություն է, եթե այնտեղ աճող փուշ ու տատասկի վրա քամիներն են թափառում, եւ նույն տարածքը վերածվում է քաղաքական գործոնի, երբ մուրճն ու բահը ձեռքին այդ հողի վրա կանգնում է տերը:

Արցախի եւ ազատագրված տարածքների ապագան կորոշի նա, ում մեջ ավելի զորեղ կլինի տիրոջ զգացումը:

«Դրօշակ»

Երբ Հայաստանը ճանաչի ԼՂՀ-ն

Ադրբեջանում օրերս հիստերիա էր բարձրացել ԼՂՀ-ն ճանաչելու մասին ՀՀ ԱԺ երկու պատգամավորների օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ կառավարության եզրակացությանը հավանություն տալու հարցը գործադիրի առաջիկա նիստի օրակարգում ներառելու որոշման շուրջ: Բաքվում դա համարել էին Հայաստանի կողմից ԼՂՀ-ի ճանաչման պաշտոնական գործընթաց սկսելու նախաձեռնություն: Ադրբեջանի նախագահի արտաքին կապերի բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովը հայտարարեց, թե ԼՂՀ-ի ճանաչումը սադրանք է Հայաստանի կողմից, որն ուղղված է բանակցային գործընթացի անտեսմանը, եւ ԵԱՀՄ ՄԽ համանախագահող երկրները պետք է դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնեն: ԱԳՆ խոսնակ Հիքմեթ Հաջիեւն էլ, ավելի առաջ գնալով, հայտարարեց, թե ԼՂՀ-ի ճանաչումը Մինսկի խմբին կգրկի մանդատից, ինչը «կարգավորման մինսկյան գործընթացի, համանախագահողների եւ միջազգային հանրության նկատմամբ վիրավորանքի եւ ամենաթողության վառ դրսեւորում է»:

Ավելի ուշ պաշտոնական Երեւանն ստիպված եղավ արձագանքել այս հայտարարություններին: ՀՀ փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը panorama.am-ին պարզաբանեց, որ խոսքն ընդամենը վերաբերում է այդ օրինագծի վերաբերյալ կառավարության եզրակացությանը: «Իսկ համաձայն եզրակացության՝ ճանաչումը պայմանավորվում է իրավիճակի հետագա զարգացումներով: Եթե Ադրբեջանը ծավալի նոր ռազմական ագրեսիա, Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցը կմտնի օրակարգ»-ասաց նա: News.am-ին որոշ պարզաբանումներ էր տվել նաեւ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Վլադիմիր Հակոբյանը: Ադրբեջանական պաշտոնական շրջանակների վերոնշյալ հայտարարությունները որակելով «զառանցանքների շքերթ»՝ նա ասել էր, որ եթե Հայաստանն սկսի ԼՂՀ-ի ճանաչման գործընթաց, ապա այդ մասին առաջինը կհայտարարի ՀՀ նախագահը:

Այս հայտարարությունները հաստատում են, որ Երեւանն այս պահին ԼՂՀ-ն ճանաչելու նպատակ չունի: Սակայն երկու պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունը օրակարգ բերելով՝ ՀՀ իշխանությունները զգալիորեն սրեցին հարցը, ինչն ավելի շատ քաղաքական ենթատեքստ ուներ եւ հավանաբար պայմանավորված էր վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով Ադրբեջանի կողմից զինուժի կուտակումներով: Դրանով Երեւանը հասկացրեց, որ եթե այդ կուտակումների նպատակը նոր ռազմական հարձակում իրականացնելն է, ապա դրա առաջին իսկ քաղաքական պատասխանը լինելու է ԼՂՀ-ի ճանաչումը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Եվ այս ուղերձը Բաքվում կարծես հասկացան: Որովհետեւ դրանից անմիջապես հետո հայտարարվեց, թե ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի մոտ ադրբեջանական զինուժն սկսում է հրետանահրթիռային ուժերի զորավարժություններ՝ փորձելով տպավորություն ստեղծել, թե կուտակումների իրական նպատակը ոչ թե լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսելն է, այլ հենց զորավարժությունների անցկացումը:

Իրականում, հայկական կողմը ԼՂՀ-ի ճանաչման հեռանկարն օրակարգ է բերել դեռ ապրիլի 3-ին, երբ պատերազմի ամենաթեժ պահին նախագահ Սերժ Սարգսյանը ԵԱՀԿ անդամ երկրների դեսպաններին պարզ ասաց, որ եթե Ադրբեջանը շարունակի ռազմական գործողությունները, եւ լայնամասշտաբ պատերազմ սկսվի, Հայաստանը ոչ միայն ճանաչելու է ԼՂՀ-ի անկախությունը, այլեւ նրա հետ կնքելու է ռազմական փոխօգնության պայմանագիր եւ ստանձնելու ԼՂՀ-ի եւ արցախցիների անվտանգության երաշխավորման պարտավորությունը: Ավելին՝ այն ժամանակ Սերժ Սարգսյանը ԱԳՆ-ին հրահանգեց նախապատրաստել այդ պայմանագրի տեքստը՝ անհրաժեշտության դեպքում այն ստորագրելու համար: Այսինքն՝ հարցը գտնվում է օրակարգում, եւ պատմական, իսկապես շրջադարձային այդ որոշումը ցանկացած պահի կարող է ընդունվել: Հարցն այն է՝ ե՞րբ դա տեղի կունենա:

Իրականում, այս պահին ԼՂՀ-ի անկախության ճանաչման քայլը կատարելու օբյեկտիվ քաղաքական նախադրյալներ չկան: Խնդիրն այն է, որ վարվող քաղաքականության համատեքստում ճանաչումն իրականում ամենավերջին, հուսահատ քայլն է, որը կանխորոշում է բանակցություններում հայկական կողմի դիրքային պարտությունը: Այն խիստ տրամաբանական կլիներ, եթե Երեւանը հայտարարեր, որ դուրս է գալիս բանակցային գործընթացից: Թեեւ Երեւանն իսկապես հայտարարել է, որ այս պահին բանակցություններին պատրաստ չէ, սակայն դա հետապնդում է բանակցությունների համար հանգիստ պայմաններ ապահովելու, Ադրբեջանին ապրիլյան պատերազմի սանձազերծման մեղավոր ճանաչելու, նրան զսպաշապիկ հագցնելու առումով միջազգային հանրության վրա ճնշում գործադրելու միջոց եւ զուտ նախապայմանային նշանակություն ունի:

ԼՂՀ-ի ճանաչումը, պրագմատիկ քաղաքականության տեսանկյունից, նպատակահարմար է երեք դեպքում: Առաջին՝ եթե միջազգային հանրությունը Ադրբեջանին ագրեսոր ճանաչեր ապրիլյան հարձակման համար, սակայն Բաքուն հրաժարվեր վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ: Այս դեպքում, միանշանակ, Երեւանը պետք է գործարկեր ԼՂՀ-ի միջազգայնորեն ճանաչման լեգիտիմ գործընթաց՝ առաջինն ինքն անելով այդ քայլը:

Երկրորդ՝ եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում կամ Գլխավոր ասամբլեայում 1994 եւ 1995թթ.՝ հրադադարի հաստատման պայմանագրերը չեղարկելուն ուղղված՝ Ադրբեջանի նախաձեռնությունն ինչոր ընթացք ստանար: Հրադադարի ռեժիմից դուրս գալը բանակցություններից հրաժարվել է նշանակում, ինչը, հետեւանքի տեսանկյունից, գրեթե նույնն է, եթե այս պահին Հայաստանը ճանաչի ԼՂՀ անկախությունը:

Եվ երրորդ՝ եթե Ադրբեջանը ռազմական նոր ագրեսիա սկսի: ԼՂՀ-ն ճանաչելու ամենաճիշտ պահը, թերեւս, ապրիլյան քառօրյա պատերազմն էր, որը բացարձակապես նոր իրավիճակ էր ստեղծել ԼՂ հարցում, եւ որի պատասխանատվությունը միջազգային հանրությունը, թեկուզ բարձրաձայն չխոստովանելով, դնում էր Բաքվի վրա: Բայց այդ պահը կորսվեց այն պահին, երբ Մոսկվայում կրակի դադարեցման շուրջ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին՝ առանց ԼՂՀ-ի անմիջական մասնակցության: Դրանից հետո նման քայլի գնալը դիտարկվելու է որպես հայկական կողմի փակուղայնության եւ անելանելիության նշան, բանակցային գործընթացը «ջրելու» միջոց, ինչը դժվար դրության մեջ կդնի հայկական կողմին: Մինչդեռ ադրբեջանական նոր ագրեսիայի դեպքում այդ քայլին գնալն ընկալվելու է որպես ԼՂՀ-ի անվտանգության ապահովման անայլընտրանք քաղաքական միջոց, որից վերստին այս կամ այն պատճառով հրաժարվելն արդեն ընկալվելու է որպես անվճռականության, անհետեւողականության դրսեւորում:

Հարցն այն է՝ ի՞նչ է անում Երեւանը՝ հասունացնելու համար այդ հեռանկարը: Առայժմ ԼՂՀ-ի ճանաչման հնարավորությունը կիրառվում է ընդամենը որպես Ադրբեջանին զսպելու գործիք:

Գեւորգ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Պետո Դեմիրճյան. Արցախը նոր ուժ է հաղորդում Հայ Դատի քաղաքական բանակին

Ապրիլի 2-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմական նոր գործողությունների, պատերազմի դասերի ու հետագա անելիքների, միջազգային հարթակներում մեր կեցվածքի, Արցախի ճանաչման հետ կապված հարցերի շուրջ «Ապառաժ»-ը զրուցել է ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի հաղորդակցության պատասխանատու Պետո Դեմիրճյանի հետ:

- ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների ու հանձնախմբերի խորհրդաժողովը հանգրվանեց Արցախում եւ, իհարկե, ոչ պատահականորեն՝ հենց մայիսի 9-ին: Ի՞նչ խորհուրդ եւ կարեւորություն է այն պարունակում:

- Ինչպես ժողովի բացման ժամանակ նշեց ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատրյանը, ուրիշ տեղ չէինք կարող լինել այս օրերին: Ապրիլյան քառօրյա ճակատամարտից հետո (պատերազմ չեմ ասում, որովհետեւ պատերազմը չի ավարտվել) Արցախում ստեղծված իրավիճակին տեղյակ լինելու ու Արցախին զորակցություն հայտնելու նպատակով ժողովը շարունակվեց Ստեփանակերտում: Հայ Դատի ներկայացուցիչներս եկանք նորից ու նորից շեշտելու, որ մենք Արցախի կողքին ենք, Դաշնակցությունը իր ժողովրդի պահանջատիրության կողքին է, Արցախի խնդիրը մեր խնդիրների առանցքն է: Ինչպես մեզ հետ հանդիպման ժամանակ շեշտեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը՝ Արցախը եւ Դաշնակցությունը մեկ հասկացություն է, որովհետեւ նպատակն է նույնը: Իրավ, յուրաքանչյուր Հայ Դատի աշխատակից այս խորհուրդը գիտակցում է ու առաջնորդվում դրանով:

Մեզ համար այսօր ոգեպնդող եւ հուսադրող է Արցախում լինելը, այստեղ գտնվելն ուժ ու եռանդ ստանալու միջոց է մեր քաղաքական բանակի համար: Մենք, այստեղ լինելով, տարբեր հարցեր քննարկելով, առաջարկություններ լսելով, Արցախի բարձրագույն իշխանության հետ հանդիպելով՝ ավելի ենք ճշտում մեր հետագա անելիքների ընթացքը:

- Ապրիլյան պատերազմական գործողությունները եւս մեկ անգամ հավաստեցին, որ Ադրբեջանի համար ընդունելի է միայն զենքի լեզուն, խնդրի լուծման ռազմական ճանապարհը: Ո՞րն է այսօրվա մեր գլխավոր անելիքը թե՛ ներքին, թե՛ արտաքին ճակատներում:

- Իրավ, ո՛չ Թուրքիան, ո՛չ Ադրբեջանը խաղաղ բանակցություն չեն ուզում, եւ սա գաղտնիք չէ: Առաջին իսկ վայրկյանից Երդողանը հայտարարեց, որ Ադրբեջանի կողքին են եւ կլինեն մինչեւ վերջ, այսինքն՝ նրանք ձեռք ձեռքի են գործում:

Ադրբեջանը միայն պատերազմի եւ ուժի լեզուն է հասկանում, եւ նա այս օրերին տեսավ հայ զինվորի ուժը, ով կասեցրեց նրա առաջընթացը: Ինչքան էլ գրասենյակներում, մայրաքաղաքներում քարտեզների վրա Ադրբեջանն ու ադրբեջանամետ ուժերը որոշեն ու մշակեն հարձակումների ծրագրեր, Արցախի զինվորը տարբերվում է նրանց զինվորներից, որովհետեւ նա գիտի, թե ինչի համար է պայքարում, եւ հենց այդ գիտակցությամբ էլ հաղթել ու հաղթելու է: Ելնելով հայկական բանակի կեցվածքից, առանց մոռանալու զոհվածների հիշատակը, մենք՝ Հայ Դատի հանձնախմբերս, ողջ հայությունը, իշխանությունները ավելի մեծ պարտավորություն պետք է ստանձնենք, որպեսզի նրանց թափած արյունը արժեւորված լինի, որպեսզի դեպքերը չկրկնվեն, հակառակորդը սանձվի:

Եվրոպայի Հայ Դատի պարագայում ասեմ, որ առաջին իսկ օրից աշխատանքի ենք լծված՝ Եվրոպայի քաղաքական շրջանակներում հայամետ կեցվածք ու մթնոլորտ ձեռք բերելու համար:

- Արցախի միջազգային ճանաչումն օրախնդիր է: Ի՞նչ աշխատանքներ են այսօր այդ ուղղությամբ իրականացվում Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի կողմից:

- Աշխարհի տարբեր երկրների Հայ Դատի գրասենյակներն առաջնային են համարում իրենց աշխատանքներում Արցախի ճանաչման խնդիրը: Անշուշտ, ամեն տարածաշրջանում մենք տարբեր մոտեցումներ ենք դրսեւորում: Այդ պայքարն արդեն սկսված է՝ ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ այլուր: Հիրավի, սա դեռ ճանաչման այն մակարդակը չէ, որովհետեւ յուրաքանչյուր երկիր իր պետական շահերն ունի, բայց քայլ առ քայլ, ապավինելով մեր միասնական աշխատաքներին, վստահ ենք՝ ավելի բարձր մակարդակներով ճանաչումն անխուսափելի կլինի:

Արցախի Հանրապետության ճանաչման հարցը, իրոք, օրախնդիր է: Մեր այս հանդիպումը ԼՂՀ նախագահի հետ առավել մեծ մղում տվեց մեզ՝ նոր թափ հաղորդելու մեր ծրագրերին:

- Ապրիլի 2-ին բռնկված պատերազմը մի շարք դասեր տվեց մեզ՝ հայերիս: Ի՞նչ եք կարծում՝ որո՞նք եղան պատերազմի գլխավոր դասերը եւ ի՞նչ անելիքներ ունենք:

- Ամենաառաջինը, որ տեսանք ու թշնամին էլ տեսավ, դա այն է, որ մեր բանակը անխոցելի է: Ունեցանք շատ զոհեր՝ կյանքի գնով կանխելով թշնամու առաջխաղացումը: Արագ ու անմիջական հակագրոհի անցնելը փաստում է մարտունակության մասին: Կուզեի շեշտել նաեւ համահայկական համախմբման իրողությունը, որը երկրորդ բանակ դարձավ, կանգնեց արցախցու կողքին: Ժողովուրդը, անկախ սոցիալական վիճակից, անկախ քաղաքական-գաղափարական հայացքների տարբերությունից, անկախ ճգնաժամից անձնվեր համախմբվեց՝ բոլոր հարցերը մի կողմ դնելով: Սա, սակայն, պարտավորեցնող դաս է, սա մղում է պատասխանատու կառավարման, պատասխանատու քաղաքական կեցվածքի, առկա թերությունների շտկման՝ թե՛ բանակի ներսում, թե՛ երկրի կառավարման ոլորտում: Հայ զինվորը ոչ մի խնդրի ու թերացման չպիտի հանդիպի:

Մյուս կողմից էլ՝ տեսանք, որ միջազգային հանրությունը ճիշտ գնահատական չտվեց կատարվածին, հավասար նժարների դրեց կողմերին: Սա էլ է դաս՝ ապացուցելով նրանց երկդիմի կեցվածքը: Սա նաեւ մեզ՝ Հայ Դատի ներկայացուցիչներիս է հրամայականներ տալիս:

Տեղեկատվական պայքարում եւս աշխատանքներ պիտի տանենք:

ԵԽԽՎ հունվարի նստաշրջանում հակահայկական 2 բանաձեւ կար, մեկը տապալվեց: Այդ նիստը եւս դաս էր մեզ: Ուրեմն՝ քաղած դասերից պետք է շտկվել, ուղղվել, գործել, իրողությունը փոխել:

- ԵԽԽՎ նախագահն ապրիլյան նիստում ասաց, որ «հայկական ուժերը պետք է դուրս բերվեն ադրբեջանական տարածքներից»: Այդ հայտարարությունից ոչ պակաս էլ ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակության նախագահ Հերմինե Նաղդալյանը հայտարարեց, որ «այդ տարածքները մենք չենք ուզում»: Ի՞նչ եք կարծում, հայկական կողմից այս եւ նման այլ հայտարարությունները որքանո՞վ կարող են ազդել հետագայում եւս ԵԽԽՎ-ում հակահայկական բանաձեւերի ընդունմանը:

- Այո, ճիշտ եք, Պեդրո Ագրամունտը ադրբեջանամետ կեցվածք է դրսեւորել ու այդ ուղղությամբ մենք եւ Իսպանիայի Հայ Դատը աշխատանքներ ենք տանում: Այդ աշխատանքների մասին այս պահին շատ բան չեմ կարող ասել, փակագծեր դեռ չեմ ուզում բացել, բայց նրան զսպելու աշխատանք ենք սկսել: Հուսանք՝ գալիք նստաշրջանին ինչ-որ փոփոխությունների կհասնենք նրա կեցվածքում:

Նշեմ, որ Ագրամունտի՝ ադրբեջանամետ պահվածքն այն գլխից էլ պարզ էր մեզ: Նա իր առաջին պաշտոնական այցը Բաքու կատարեց. սա դրա հավաստիքն էր: Ընդհանրապես, եվրոպական մի շարք հակակոռուպցիոն կազմակերպություններ զեկույցներ են գրել, քննադատել նրա կոռուպցիոն կեցվածքը: Այսինքն՝ միայն Հայ Դատի գրասենյակը չէ, որ դա տեսնում ու ասում է:

Ինչ վերաբերում է Հ. Նաղդալյանին, ասեմ, որ ողջունելի էր Ստրասբուրգում նրա հանդիպումը Ագրամունտի հետ: Չգիտենք ինչ է խոսվել, բայց հուսով ենք՝ Նաղդալյանը բացատրել է Ագրամունտին նրա ադրբեջանամետ կեցվածքի ոչ ճիշտ լինելը: Անհասկանալի է, սակայն, այսօրվա իրավիճակում Նաղդալյանի նման հայտարարությունը: Տեսանք Արցախից հնչած արձագանքն այդ վերաբերյալ: Կարծում եմ՝ Հ. Նաղդալյանը պետք է ավելի զգույշ լինի, հատկապես՝ երբ այսօր մեր ամեն մի քայլը կշռադատվածություն է պահանջում:

Սա էլ պատերազմից քաղելիք դասերից է:

Ճիշտ է, ԵԽԽՎ-ն անմիջական դերակատարություն չունի բանակցություններում, բայց նման հայտարարությունները մեր քաղաքական գործիչների կողմից կարող են քաղաքական մթնոլորտ ստեղծել՝ նպաստելով հակահայկական բանաձեւերի առաջ քաշելուն կամ Պեդրո Ագրամունտի ադրբեջանամետ կեցվածքի հետագա դրսեւորումներին:

Հրադադարը խաղաղություն չէ դեռ, ճակատամարտը դադարեցվեց բերանացի: Փաստաթուղթը եղավ 1994-ին ու 1995-ին, ինչը Ադրբեջանն այսօր չի էլ ընդունում: Պատերազմը չի վերջացել, ուստի բոլորս մեկ պարտավորություն ունենք՝ մեր հնարավորության սահմաններում զինվոր լինել այս անավարտ պատերազմում:

Հարցազրույցը՝ Հերմինե ԱՎԱԳՅԱՆԻ

Վերանորոգենք մեր հանձնառությունը. ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական վարչություն

ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեն հայտարարություն է տարածել, որով իր աջակցությունն է հայտնում ապրիլյան պատերազմի ընթացքում տուժած Արցախի բնակավայրերին:

«Արցախի հերոսական ժողովուրդն իր երիտասարդների թափած թանկագին արյան գնով պաշտպանում է մեր հայրենիքի սահմանները: Իր նահատակ զավակը հողին հանձնող մայրը, արտահայտելով Արցախի քաջարի ժողովրդի զգացումները՝ մեզ հստակորեն պատգամում է, որ «մենք թանկագին կյանքեր կորցրինք մեր հողը պաշտպանելու համար: Մեկ թիզ հող իսկ պիտի չհանձնենք թշնամուն»:

Ադրբեջանական ուժերի՝ Արցախի վրա վայրագ հարձակումները ապրիլ 2-ին ո՛չ միայն ապակայուն վիճակ են ստեղծել տարածաշրջանում, այլեւ ամբողջական պատերազմի բռնկումը հավանական են դարձրել՝ վտանգելով Արցախի եւ ժողովրդի գոյությունը: Արցախի Պաշտպանության բանակը կանգնեցրեց այս հարձակումները եւ ուժեղ հարվածով ետ շպրտեց թշնամի ուժերին, սակայն ավերվեցին Թալիշն ու Մատաղիսը, եւ ծանր վնասներ հասցրին Մարտակերտին: Այս սադրիչ հարձակումները քաղաքացիական ու զինվորական բազմաթիվ զոհերի եւ վիրավորների պատճառ դարձան:

Մենք վերահաստատում ենք մեր զորակցությունն Արցախի ժողովրդին, կառավարությանը եւ Պաշտպանության բանակին, իրենց մարդկային իրավունքների բռնաբարման այս վերջին դրսեւորման դեմ կանգնելու ճիգին:

ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեն, արձագանքելով Արցախի մեր եղբայրների կոչին, վճռել է կարեւոր դեր ստանձնել՝ վերականգնելու համար քանդված շենքերը, որպեսզի մեր հայրենակիցները վերադառնան իրենց բնականոն կյանքին, եւ որպեսզի Ադրբեջանի համար հստակ դառնա, թե իր զինվորական ուժով ու սպառնալիքով չի կարող կոտրել հայ ժողովրդի կամքը ո՛չ Արցախով մեկ, ո՛չ Սփյուռքով մեկ: Կենտրոնական կոմիտեն կոչ է ուղղում հայությանը՝ միանալու Հայ մշակութային միության «Արցախի հետ» եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցության «Մեր զինվորների հետ» զույգ նախաձեռնություններին՝ ապահովելու Արցախի բնակչության անվտանգությունը եւ ամրացնելու Արցախի անկախ պետականությունը: Արցախի ազգային-ազատագրական պայքարը սկիզբ առավ 1988-ին, եւ արցախցին կենաց-մահու պատերազմ մղելու պարտադրվեց 1990-ի առաջին տարիներին:

ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի կազմակերպությունը իր շարքերով, համակիրներով եւ ուղեկից կառույցներով մի՛շտ կանգնել է Արցախի կողքին եւ իր բոլոր հնարավորությունները ի սպաս դրել նրա ապահովությունը երաշխավորելու համար: Ժամանա՛կն է, որ վերանորոգենք մեր հանձնառությունը՝ աջակցելու հայրենի մեր արիասիրտ եղբայրներին ու քույրերին»,- ասված է հայտարարության մեջ:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ-ն բանակցային կողմ դարձնելու ամենահարմար պահն է

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ պատգամավոր Դ. Իշխանյանը Yerkir.am-ի հետ հարցազրույց է ունեցել:

Ըստ Իշխանյանի՝ ցանկացած ռազմական կոնֆլիկտի վերջակետը խաղաղ կարգավորումն է, ռազմական գործողությունները հարատեւ չեն կարող լինել: «Մեզ համար մի բան հստակ է՝ այս հարցի լուծումն Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն է, կարգավիճակի հարցի լուծումը եւ, բնականաբար, նաեւ հարաբերությունները՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի եւ, ընդհանրապես, համաշխարհային հանրության հետ: Ադրբեջանը, սակայն, նախընտրեց այլ տարբերակ՝ վերջին տարիների իր ռազմատենչ հայտարարություններին արդեն գործնական քայլ հաղորդեց, ապրիլի 2-ին սկսված ռազմական գործողություններով փորձեց հարցը վճռել»,- ասել է նա եւ հավելել, որ դժվար է ասել՝ բանակցային գործընթացը ինչ փուլերով կընթանա, քանի որ այն փուլերն ու պատկերացումները, որ կային մինչեւ ապրիլի 2-ը, այլ էին:

Իշխանյանը համոզված է՝ ռազմաքաղաքական այս իրավիճակում անհրաժեշտ է նոր լուծումների տարբերակ փնտրել, նաեւ՝ այդ տարբերակները պետք է իրականությանը ոչ միայն համապատասխան լինեն, այլ նաեւ բավարարեն երկու կողմերին՝ Արցախին եւ Ադրբեջանին:

Հայաստանի կողմից Արցախի ճանաչման գործընթացի մասին խոսելով՝ նա նշեց, որ, 1994 թվականի զինադադարի պայմանագրից սկսած, տեսակետ է ունեցել, որ պետք է քաղաքական հարմար պահը օգտագործել ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ի անկախությունը ճանաչելու համար: «Այդ ժամանակից էլ այդպիսի պահեր եղան: Ադրբեջանի կողմից ապրիլին սանձազերծված գործողությունները մեզ հերթական անգամ նման հնարավորություն ընձեռեցին, թեեւ կարող եմ ասել՝ գուցե հարցն այսօր չէ, որ պետք է քննարկվեր, գուցե այսօր էլ մենք ուշացել ենք: Բայց պետք է ստեղծել քաղաքական այնպիսի մթնոլորտ, որով կարողանանք ազդել թե՛ Ադրբեջանի եւ թե՛ հարցով շահագրգիռ կողմերի վրա: Ակնհայտ է, որ Ադրբեջանը խաչ դրեց բանակցային գործընթացի վրա»,- ասել է Իշխանյանը եւ հիշեցրել, որ ՀՅԴ-ն ուներ որդեգրած քաղաքական մարտավարություն, փորձում էր բանակցային գործընթացին զուգընթաց նաեւ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման ուղղությամբ գործնական քայլեր իրականացնել՝ բացատրելով, մեկնաբանելով, որ այս գործընթացը, զուգահեռ բանակցային գործընթացին, կարող է դրական ազդեցություն ունենալ եւ հեշտացնել բանակցություններն ավարտին հասցնելը:

«Կարծում եմ, որ այսօր էլ Հայաստանի կողմից Արցախի ճանաչման գործընթացը կարող է լուրջ խթան լինել հարցի հանգուցալուծման համար»,- ընդգծել է ԼՂՀ ԱԺ դաշնակցական պատգամավորը:

Իշխանյանը նաեւ նշել է, որ զիջումների կամ փոխզիջումների գործընթացում հողային զիջում հասկացությունը ԼՂՀ պատկերացումներից դուրս է եւ անհնար: «Ուզում եմ մեկ անգամ եւս շեշտել, որ հողային զիջում հասկացությունը մեր պատկերացումներից ընդհանրապես դուրս է: Բարեբախտաբար, պիտի ասեմ, որ այդ մտայնությունը ամբողջ Արցախի հասարակություն մեջ է ամրագրված, եւ, 90-ական թվականներին Արցախի Հանարապետության սահմաններն ամրագրելով, մենք կարողացել ենք նաեւ մեր ժողովրդի մեջ այդպիսի ընդհանուր հոգեբանություն եւ մտայնություն արմատավորել»,- վստահեցրել է պատգամավորը:

Մեր այն հարցին, թե ե՞րբ ԼՂՀ-ն բանակցող կողմ կդառնա, Իշխանյանը պատասխանել է. «Այսպիսի հարմար պահ, թերեւս, մենք չենք ունեցել 1998 թվականից այս կողմ, երբ Ղարաբաղը դուրս մնաց բանակցային գործընթացից, եւ այս հարմար առիթը պետք է ուղղակիորեն օգտագործել: Հայաստանի դիվանագիտական կորպուսը հիմա էլ ամեն ջանք պետք է գործադրի Ղարաբաղին բանակցային սեղանի շուրջ վերադարձնելու համար: Հայկական դիվանագիտական կորպուսի գործողությունների մասին էլ ասեմ, որ դրանք համարում եմ համադրված եւ իրար շարունակող: Բնականաբար, այսպես պետք է լինի եւ, բնականաբար, համաձայնել-չ-համաձայնելու կամ տեսակետներ հայտնելու, բաժանելու-չբաժանելու խնդիրները պետք է քննարկվեն ներքին դաշտում: Ներքին քննարկումների արդյունքում պետք է դերերի բաշխում կատարվի, եւ յուրաքանչյուր կողմ ստանձնի իր պարտականություններն ու դերը: Երբեմն գոհ չլինելով հայկական արտաքին քաղաքականություն որոշ գործողություններից՝ այդուհանդերձ, ակնկալում եմ, որ մեր գործողությունները իրար շարունակող եւ լրացնող կլինեն»:

Ռուսաստանի Դաշնության եւ, առհասարակ, միջազգային հանրության՝ ապրիլի սկզբի ռազմական գործողությունների եւ դրանց հաջորդող ժամանակահատվածի վերաբերյալ մոտեցման եւ Ադրբեջանին զենք վաճառելու հանգամանքին անդրադառնալով՝ ՀՅԴ-ական պատգամավորը նշել է, որ միշտ հակված է եղել ավելի շատ սեփական գործողություններին գնահատական տալ: Ըստ նրա՝ բնականաբար, ՌԴ-ն փորձում է, իր պետական շահերից ելնելով, իր քայլերն ու պետական քաղաքականությունը կերտել:

«Մենք երբեմն այդ քայլերը փորձում ենք որակել որպես դավաճանական, բայց, մյուս կողմից, մեր սեփական քայլերը պետք է ունենանք: Մեր սեփական քայլերն այդքան կոնկրետ ու հստակեցված չեն: ՌԴ-ն հստակ է ներկայացրել իր քայլերի ուղղությունը, մասնավորապես՝ Ադրբեջանի հետ շարունակել ինչպես ռազմական, այնպես էլ այլ ոլորտներում համագործակցությունը: Կարեւոր է նաեւ, որ կարողանանք ճիշտ ձեւակերպել եւ ճիշտ հունի վրա դնել ՌԴ-ի հետ մեր հարաբերությունները: Դրանք չպետք է բխեն միայն Ռուսաստանի շահերից, այդ հարաբերությունները պետք է բխեն ուղղակի մեր շահերից: Մեր շահերը թելադրում են, որ նման վարքագծի եւ նման պահվածքի դեպքում մենք երբեմն պետք է օգտվենք նաեւ համաշխարհային քաղաքականությունից եւ այլընտրանքային հարաբերություններ ունենանք: Այդպիսի այլընտրանքների հնարավորություններ մենք ունեցել ենք»,- ասել է արցախցի պատգամավորը:

Իշխանյանը վստահեցրել է նաեւ, որ մենք ունենք բավարար ուժ Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունները վերսկսելու որեւէ փորձ կանխելու, կասեցնելու համար:

yerkir.am

Հակոբ Տեր-Խաչատրյան. Արցախն Ադրբեջանի մաս կազմելու հարցը պետք է բացառվի միջազգային հանրության կողմից

«Ապառաժ»-ը զրուցել է Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովի մասնակից, ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատրյանի հետ:

- Այս տարի, Ցեղասպանության 101 ամյակի շեմին ականատես եղանք նոր վայրագության՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողությունների, որը, եթե հայ զինվորի կողմից չկասեցվեր, կհանգեր նոր ցեղասպանության: Ի՞նչ աշխատանքներ է տանում այսօր Հայ Դատի կենտրոնական խորհուրդն Ադրբեջանի ագրեսիվ կեցվածքն աշխարհին ըստ արժանվույն ներկայացնելու եւ դատապարտելու ուղղությամբ:

- Ադրբեջանի կողմից սանձազերծված ապրիլյան մարտերն ու վայրագություններն անպատիժ մնացած ցեղասպանության շարունակություն են, եւ այս հարցն այն կարեւորագույն հարցերից մեկն է, որն այս օրերին քննարկվում է ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովում:

Այս ուղղությամբ, բնական է, որ մենք ազգովի վճռական ենք, որպեսզի որպես ցեղասպանություն ապրած ժողովուրդ՝ ոչ մի դեպքում կրկին ցեղասպանություն տեսնելու հարկադրանքի առջեւ չկանգնենք: Մենք չենք կարող թույլ տալ, որ Ադրբեջանն իր հարձակողական քաղաքականությամբ ճամփա հարթի դեպի նոր ցեղասպանություն՝ Արցախը մեկընդմիշտ բաժանելով հայությունից:

Նոր պատերազմը ստեղծեց նոր կացություն: Մենք ունեինք արդեն ծրագրված ռազմավարություն՝ բացահայտելու Ադրբեջանի հարձակողապաշտ քաղաքականությունը եւ Արցախի հանդեպ ունեցած ախորժակները:

Ապրիլյան պատերազմական գործողություններից հետո մեր աշխատանքներին գումարվել է եւս մեկ խնդիր՝ պատերազմական ոճիրի հանգամանքը՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված գործողությունները խաղաղ եւ անպաշտպան բնակչության նկատմամբ: Դա միջազգայնորեն դատապարտելի հարց է, որի ուղղությամբ ՀՅԴ Հայ Դատի գրասենյակներն այսօր աշխատանքներ են ծավալում:

ՀՅԴ Հայ Դատի գրասենյակներն աշխատանքներն իրականացնում են երեք ուղղություններով: Առաջինը՝ հակահայկական քարոզչության դեմ աշխատանքներն են, երկրորդը՝ պատերազմական ոճիրների հարցն է, իսկ երրորդը՝ Ադրբեջանի վարքագծի միջազգային դատապարտումը: Պետք է հասնենք նրան, որ միջազգային հանրության համար Արցախն Ադրբեջանի մաս կազմելու հարցը բացառվի:

- Արցախի միջազգային ճանաչումն այլեւս պարտադիր է, ու գլխավորապես Հայ Դատի ջանքերով այդ գործընթացը կարծես սկսված է: Ի՞նչ աշխատանքներ են այսօր տարվում:

- ՀՅԴ Հայ Դատի գրասենյակները վերջին երկու տարիների ընթացքում բավականին հաջողություններ են ունեցել Արցախն աշխարհին ներկայացնելու, Արցախի անկախության, ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման ուղղություններով: Ավստրալիայի ամենամեծ նահանգում, ինչպես նաեւ ԱՄՆ նահանգներում տեղի ունեցած բանաձեւերի արշավը հաջողություններ գրանցեց: Պետք է ընդունել, որ խնդիրը դեռ ֆեդերալ մակարդակի չի հասել, բայց պետք է բարձրացնել այն, որպեսզի դառնա իսկապես օտար պետությունների քաղաքականության մաս:

Այդ ասպարեզում, սակայն, կան զգալի խոչընդոտներ, եւ այդ խոչընդոտները բխում են մեծ շահերից: Այդ խոչընդոտները կան նույնիսկ բարեկամ երկրների պարագայում:

Նրանց մտահոգում է այն, որ Արցախի ճանաչումը ներքին բաժանումների պատճառ է դառնալու, նույնիսկ Կանադայի ու Իրանի պես երկրների պարագայում բացահայտ այդ մասին խոսելը ներքին ազդակի կարող է վերածվել նրանց համար: Այդ ուղղությամբ ընդհանուր զգուշավորությունը նկատելի է:

- Այս օրերին քննարկվում է նաեւ Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի անկախության ճանաչման հավանականությունը: Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ է դա իրատեսական, եւ նախագծի ընդունման դեպքում ի՞նչ արդյունքի կհասնենք արցախյան պահանջատիրության հարցում:

- Հայ Յեղափոխական Դաշնակցության համար, բնականաբար, արդեն իսկ իրողություն է Արցախի անկախությունը, եւ անձնապես կարծում եմ, որ Հայաստանի ճանաչումը հավելյալ ազդակ կլինի այդ ուղղությամբ: Սակայն, ճիշտ է, որ դա կստեղծի լուրջ խոչընդոտներ բանակցային գործընթացում. այդ ժամանակ Ադրբեջանը կարող է կասեցնել ամեն ինչ եւ Հայաստանն աշխարհին ներկայացնել որպես բանակցությունները շարունակելուն խափանող կողմ: Խաղը կայանում է նրանում, որ քաղաքական գնդակը միշտ փորձում են նետել Հայաստանի դաշտը, եւ այդ ուղղությամբ է, որ ճանաչման խնդիրը նաեւ կախված է այդ իրողությունից: Հայաստանն անկախության ճանաչումը պահում է որպես վերջին քարտ: Կասկած չկա, որ Ադրբեջանի կողմից պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում արդեն բանակցային գործընթացին վերջ կդրվի եւ ճանաչումը ինքնաբերաբար կդառնա իրողություն:

Որպես ՀՅԴ անդամ, բնականաբար ուզում եմ տեսնել Արցախի միավորումն ամբողջական Հայաստանին: Հայ ազգն անբաժանելի է: Մենք մեկ ժողովուրդ ենք, մեկ ազգ ենք՝ աշխարհով սփռված, բայց նույն ազգի պատկանելիության ամուր զգացումով տոգորված:

Հարցազրույցը՝ Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆԻ

Բակո Սահակյանը հանդիպում է ունեցել Հայ Դատի գրասենյակների ներկայացուցիչների հետ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը մայիսի 10-ին Տիգրանակերտի հնագիտական թանգարանում հանդիպում է ունեցել ՀՅԴ Հայ Դատի կենտրոնական խորհրդի եւ տարածաշրջանային հանձնախմբերի ու գրասենյակների ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականությանը, Հայրենիք-Սփյուռք կապերին, ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողություններին եւ դրանց հետեւանքներին, տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Նախագահ Սահակյանն արժեւորել է ՀՅԴ Հայ Դատի գործունեությունը Հայոց ցեղասպանության, Արցախի հիմնախնդրի օբյեկտիվ ներկայացման, համահայկական նշանակություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ:

Բակո Սահակյանը ողջունել է Արցախում ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների համաժողովի անցկացումը՝ ընդգծելով միջոցառման յուրահատուկ կարեւորությունը:

ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատրյանը, կարեւորելով ԼՂՀ նախագահի հետ հանդիպման այս ձեւաչափը, «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ այսօր անհրաժեշտություն կար այս պատմական պահին ընդգծելու այն առաջնահերթությունները, որոնց ուղղությամբ պետք է ծավալեն համատեղ աշխատանքեր: Նա ընդգծել է, որ ՀՅԴ կառույցներն այսուհետ եւս իրենց ներուժն ի սպաս են դնելու հայրենիքին՝ լինի դա նյութական առումով, թե արտաքին քաղաքականության մեջ:

Շվեդիայի Հայ Դատի գրասենյակի ներկայացուցիչ Արշակ Գալաֆյանն էլ նշել է, որ անկեղծ ու անմիջական մթնոլորտում կայացած քննարկումը հիմնականում ապրիլյան պատերազմական գործողությունների, միջազգային հանրության տրամադրվածության եւ հետագա քայլերի ու անելիքների մասին էր: Եղան առաջարկներ ու պարզաբանումներ:

«Տարիներ ի վեր Հայ Դատի գրասենյակների աշխատանքների առաջնային խնդիրներից է Արցախի հարցը, ուստի, բնականաբար, պետք է այսօր, առավել քան երբեւէ, շարունակենք մեր ծրագրերը: Միաժամանակ՝ աշխարհը պետք է Արցախը տեսնի որպես ժողովրդավար, իրավարար երկիր, որտեղ գործում ու հարգվում են մարդկային բոլոր իրավունքները»,- ասել է Գալաֆյանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողով Արցախում

1 ← «Երկրորդ ուղղությունը, որը որդեգրել են Հայ Դատի գրասենյակները, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացումն է եւ պաշտպանությունը միջազգային ատյաններում:

Երրորդը Ցեղասպանության ճանաչման գործընթացի շարունակությունն է, որն արդեն բավականին երկար ճամփա է անցել, եւ մանավանդ՝ նոր էջի բացումը, որը պահանջատիրության էջն է:

Հայ դատի վերջին՝ չորրորդ խնդիրը, մեր քաղաքական ուժի բարձրացումն է աշխարհով մեկ, մեր երիտասարդության եւ ժողովրդի քաղաքականացման խնդիրն է, մանավանդ՝ Սփյուռքում»,- եզրափակել է նա:

Ներկաներին ուղղված ողջույնի խոսքով հանդես է եկել նաեւ ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը՝ կարեւորելով նման միջոցառման անցկացումն Արցախում:

ԼՂՀ Արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանն իր ելույթում նույնպես շեշտել է, որ Արցախի հարցը ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների բաղկացուցիչ եւ կարեւորագույն մասն է:

Կ. Միրզոյանը նաեւ նշել է. «Եթե մենք ունենայինք ԼՂՀ լիարժեք կարգավիճակ բանակցային գործնթացում, այսօր միգուցե նման իրավիճակում չէինք հայտնվի եւ Ադրբեջանն էլ նման հանդուգն պահվածք չէր դրսեւորի: Առանց ԼՂՀ-ի՝ բանակցային գործընթացին որպես լիարժեք կողմի մասնակցության, գործընթացի կայուն ու մնայուն կարգավորումը պարզապես իրատեսական չէ: Մեր աշխատանքները պետք է ուղղված լինեն ԼՂՀ միջազգային ճանաչման նպատակին, ինչը կլինի հզոր անվտանգության երաշխիք արցախահայության համար»:

Արտգործնախարարն ընդգծել է, որ Հայոց ցեղասպանության չճանաչված լինելը գայթակղություն է ծնում՝ կրկնելու նոր ցեղասպանություններ:

«Այն, ինչ փորձում էին Ադրբեջանի իշխանությունները կատարել ապրիլին, այն վայրագ պահվածքը մեր զինվորների եւ մեր քաղաքացիական բնակչության նկատմամբ, ռմբակոծությունները խաղաղ բնակավայրերի նկատմանբ այլ բառով բնութագրել, քան ցեղասպանության փորձ, չի կարելի: Ապրիլյան այս օրերին նոր ցեղասպանություն կանխվեց»:

Խորհրդաժողովը շարունակվել է նաեւ մայիսի 10-ին եւ 11-ին: Մասնակիցները հանդես են եկել հայտարարությամբ:

Հայ Դատի հանձնախմբերը նոր թափով պիտի հաղթահարեն Արցախ-Հայաստանի ու հայության դիմագրաված մարտահրավերները. հայտարարություն



Երեւանում եւ Ստեփանակերտում մայիսի 8-11-ը գումարվեց ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովը:

Խորհրդաժողովին մասնակցեցին Հայ Դատի ավելի քան 25 հանձնախմբերից ու գրասենյակներից եւ ՀՅԴ կուսակցական մարմիններից մոտ 65 ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովի օրակարգի հիմնական կետերն էին.

- Արցախի իրավական միջազգային ճանաչման համար եւ Ադրբեջանի հակահայ քաղաքականության դեմ պայքար,

- Աշխատանքներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ պահանջատիրական պայքարի ուղղությամբ,

- ՀՀ արտաքին քաղաքականություն եւ մարտահրավերներ,

- Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության ուղղությամբ նախաձեռնություններ:

Խորհրդաժողովը քննարկեց Հայ Դատի աշխատանքների ընթացքը 2015-ի հունվար ամսից առ այսօր:

Հայ Դատի աշխարհասփյուռ գրասենյակներն ու հանձնախմբերը, ավարտելով իրենց գումարած քառօրյա խորհրդաժողովը, հայտարարում են՝

- Իրենց ամբողջական ու անվերապահ աջակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն ու ժողովրդին՝ ընդգծելով, որ հավելյալ վճռականությամբ պիտի շարունակեն Արցախի անկախության միջազգային ճանաչման, բարգավաճման ու անվտանգության ապահովմանն ուղղված իրենց ջանքերը:

- Դատապարտում են Ադրբեջանի կողմից 1994 թվականի մայիսին կնքված զինադադարի եռակողմ համաձայնության շարունակական խախտումներն ու ապրիլի 2-ին շղթայազերծած հարձակումը, եւ անընդունելի համարելով դրա առնչությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ու ընդհանրապես միջազգային հանրության՝ նախահարձակ լինողին ու նրա զոհին նույն նժարի վրա դնող հայտարարությունները, պահանջում են հստակ ու արդար գնահատանքի որդեգրում, ինչը կարող է միայն նպաստել Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

- Նոր թափ կտան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, փոխհատուցման ու հայ ժողովրդի պահանջատիրության նկատմամբ իրենց հանձնառությանը:

- Իրենց աջակցությունն են հայտնում Հայաստանի Հանրապետության բարգավաճման, անվտանգության ապահովման ու միջազգային հեղինակության զարգացման ջանքերին:

- Իրենց զորակցությունն են հայտնում Ջավախքի հայությանը՝ նրանց քաղաքական, կրթական-մշակութային եւ հոգեւոր իրավունքների պաշտպանության եւ ընկերային-տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ քայլերին:

- Առավել թափով պիտի շարունակեն քաղաքական հարաբերությունների ուղով անվտանգության եւ իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ՝ Սիրիայում եւ Հայաստանում գտնվող սիրիահայությանը մարդասիրական միջազգային աջակցություն ապահովելու նպատակով աշխատանքները:

Հայ Դատի գրասենյակներ եւ հանձնախմբեր
Ստեփանակերտ, մայիս 11 2016թ.

Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 8 (392) 1-17 մայիս, 2016թ.

Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Պատերազմից խուսափելու միջոցը պատերազմին պատրաստ լինելն է

Նորից ու նորից հայաստանա-ադրբեջանական եւ ղարաբաղա-ադրբեջանական սահմանների լարվածությունը չի դադարում: Ապրիլյան ռազմական գործողություններից հետո առանց իրավաբանական ձեւակերպումների հաստատված այս անորոշ ու փխրուն «հրադադարը» անընդհատ ուղեկցվում է կրակոցներով, զոհերով ու վիրավորներով: Նշանակում է՝ պատերազմը չի էլ լռել, թեւ ինչ-որ մեկը նրան «քառօրյա պատերազմ» է կոչել եւ այդ եզրույթը շրջանառության մեջ դրել: Պարզապես այդ օրերին եղել են ավելի լայնածավալ ռազմական գործողություններ, մարտեր, ռմբակոծությունների աննախադեպ աճ, որի վտանգն այսօր էլ կա ու ամեն պահի սպառնում է վերսկսվել...

Ապրիլյան լայնածավալ ռազմական գործողությունները եւս մեկ անգամ փաստեցին, որ ինչքան էլ իշխող երկրների մեծ մայրաքաղաքներում հանդիպումներ կազմակերպվեն՝ անգամ հայկական կողմի մասնակցությամբ, առանց Ղարաբաղի անմիջական մասնակցության, առանց սահմանին վերահսկման մեխանիզմների հստակ կիրառման, առանց կոնկրետ, որեւէ կողմին ուղղված հասցեական կոչի, անվտանգության ամրակուռ երաշխիքների ձեւակերպման ցանկացած հանդիպում դատապարտված կլինի անհաջողության: Հայկական դիվանագիտության համար անփոփոխ պետք է լինի սահմանադրորեն ամրագրված եւ պատմականորեն հայկական տարածքների հետ կապված խնդիրը՝ որպես հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունք, որովհետեւ զիջումների պարագայում կանխատեսել կարճաժամկետ հեռանկարում իրադարձությունների զարգացման հավանականությունը՝ այնքան էլ դժվար չէ, քանզի առանց այդ անվտանգության պատնեշի (տարածքների) դժվար է լինելու հետագա ընթացքը թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի համար: Ուրեմն, այս պարագայում մեր կողմից տարածքային որեւէ զիջում որեւէ կերպ չի կարող արդարացված լինել, ու պետք է բացառվի:

Պատերազմական այս պայթյունավտանգ իրավիճակում կարեւորը եղել եւ մնում է ամրանալը բոլոր առումներով՝ չքննարկելով ու անգամ չթերագնահատելով հակառակորդի ունեցած-չունեցած հնարավորությունները: Այլ ելք չկա, քանզի Ադրբեջանը դեռ անորոշ ժամանակ շարունակելու է իր այս ռազմատենչ դիրքորոշումը, Թուրքիան էլ երբեւէ չի դադարելու նրա դաշնակիցն ու հանցակիցը լինելուց բոլոր առումներով: Հայկական զորքերն էլ ոչ մի տեղ չեն նահանջելու, որովհետեւ հենց իրենց տեղում են, դեռ մի բան էլ տեղ ունեն առաջանալու, թեկուզեւ մեր ժողովրդի անվտանգության երաշխիքներն ավելի ամրապնդելու համար: Մեր գործն այս պարագայում պետության ու բանակի «շինարարությունն է», պաշտպանական, ազգային անվտանգության հզոր հայեցակարգի վերաձեւակերպումը, ռազմական հստակ քաղաքականությունը, քանզի՝ եթե երբեւէ Ադրբեջանը համոզված լինի, որ կարող է թեկուզ մեկ թիզ հաղթանակ կորզել, նա նորից մի կողմ է դնելու բանակցությունների գործիքները եւ ձեռքն առնի թնդանոթներն ու հրթիռները... Ուստի, վերոնշյալ ուղղություններում ցանկացած մի թերություն կարող է դիրքապահ զինվորի կյանքի կորստով փոխհատուցվել...

Այս օրերին Արցախում գումարված Հայ Դատի՝ աշխարհի տասնյակ երկրների գրասենյակների ու հանձնախմբերի խորհրդաժողովի արձանագրած կարեւոր կետերից մեկն ասում է. «Մեր աջակցությունն ենք հայտնում Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների բարգավաճման, անվտանգության ապահովման ու միջազգային հեղինակության զարգացման ջանքերին»: Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը անտարանջատելի են, ուստի եթե մեր ներքին ջանքերին գումարվում են նաեւ Սփյուռքի մեր հայրենակիցների համատեղ ջանքերը, ապա անհնար է, որ արդյունքի չհասնենք, ուղղակի եղածը շտկելու եւ միասնական կամքի դրսեւորում է պետք, հատկապես երբ միասնությունն ու դրանից բխող արդյունքը մեզ՝ հայերիս ամենեւին էլ խորթ չեն...

Պատերազմից խուսափելու ամենագլխավոր միջոցը պատերազմին պատրաստ լինելն է...

ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողով Արցախում

Մայիսի 9-ին ԼՂՀ ԱԺ նիստերի դահլիճում կայացավ ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովի երկրորդ նիստը, որը վարում էր ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը:

Նիստի սկզբում ներկաները մեկ րոպե լռությամբ հարգել են ապրիլյան պատերազմի նահատակների հիշատակը:

Ողջունելով ներկաներին՝ Դավիթ Իշխանյանը նշել է, որ ինչպես 25 տարի առաջ, այնպես էլ ապրիլյան պատերազմին հաջորդող այս օրերին հայության ներուժը կենտրոնացավ Արցախում՝ ծառայելով Արցախի ժողովրդի բովանդակ շահերին:

«Այս օրերին Երեւանում մեկնարկած Հայ Դատի կենտրոնական եւ շրջանային գրասենյակների ու հանձնախմբերի խորհրդաժողովի հիմնական մասն Արցախում անցկացնելն ամփոփում է մեծ պատգամ: Ինչպես եւ նախորդ տասնամյակներում, այսօր եւս մենք այստեղ ենք միասին ու միասնական, համոզված ու հաստատակամ մեր գաղափարներին ու ծրագրերին, պատրաստակամ՝ դիմագրավելու մեզ նետված հերթական մարտահրավերները,- ասել է Դավիթ Իշխանյանը եւ հավելել,- մեր գիտակցումն այն է, որ Հայ Դատի ուղղությամբ տարվող աշխատանքների հաջողությունների բանալին գտնվում է Արցախի սահմաններում ու ամփոփված է հայ զինվորի ոգոմ»:

«Դաշնակցություն» խմբակցության ղեկավարը շնորհավորել է ներկաներին կարեւոր ու պարտավորեցնող Եռատոնի կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ հաղթանակներն այսուհետ եւս կլինեն մեր ժողովրդի ուղեկիցը:

ՀՅԴ Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր- Խաչատրյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ Դաշնակցության համար հպարտություն է այդ խորհրդաժողովն Արցախում անցկացնելը:

«Մենք՝ որպես հայ ժողովրդի երկրորդ բանակ, Հայ Դատի բանակ, քաղաքական գործերում մեր պայքարն առաջ տանող բանակ, պետք է գայինք այստեղ եւ մեր աջակցությունն ու զորակցությունը հայտնեինք Արցախի ժողովրդին: Դա նվազագույնն է, ինչը կարող էինք անել եւ պետք է առավել մեծ թափով շարունակենք մեր աշխատանքները:

Հայ Դատի աշխատանքը կարելի է ամփոփել չորս կետերով: Առաջին կետն Արցախի ուղղությամբ մեր կատարած աշխատանքներն են աշխարհով մեկ՝ լինի դա ազգային ինքնորոշման իրավունքի շեշտադրում, լինի դա Ադրբեջանի հարձակողական եւ առհասարակ հակահայ քարոզչության դեմ: Այս ուղղությամբ մեր աշխատանքներն ավելի մեծ թափ ստացան մանավանդ քառօրյա պատերազմական գործողություններից հետո, որովհետեւ անհրաժեշտ էր մեկ բռունցի մեջ հավաքվել: Հայ Դատը, որպես Արցախի թիկունք, քաղաքական առումով այսուհետ եւս կպաշտպանի Արցախը»,- ասել է Հակոբ Տեր-Խաչատրյանը:

➔ 2

Հայ Դատի հանձնախմբերը նոր թափով պիտի հաղթահարեն Արցախ-Հայաստանի ու հայության դիմագրաված մարտահրավերները. հայտարարություն



Երեւանում եւ Ստեփանակերտում մայիսի 8-11-ը գումարվեց ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովը:Խորհրդաժողովին մասնակցեցին Հայ Դատի ավելի քան 25 հանձնախմբերից.....

Կարդացեք 2-րդ էջում

Հակոբ Տեր-Խաչատրյան. Արցախն Ադրբեջանի մաս կազմելու հարցը պետք է բացառվի միջազգային հանրության կողմից

«Ապառաժ»-ը զրուցել է Արցախի մայրաքաղաքում ընթացող Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովի մասնակից, ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատրյանի հետ:

Կարդացեք 3-րդ էջում